Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2006թ.
սեպտեմբերի 30-ի թիվ 1 նիստում
ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան
« 30 » սեպտեմբերի 2006թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) մեթոդական խորհրդի իրավասությունները, ձևավորման և աշխատանքի կարգը:
1.2. Համալսարանի մեթոդական խորհրդի կանոնակարգը հաստատում է Համալսարանի գիտական խորհուրդը:
1.3. Համալսարանի մեթոդական խորհրդի կանոնակարգի մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են նույն կարգով:

2. Մեթոդական խորհրդի կարգավիճակը և կազմը.

2.1. Մեթոդական խորհուրդն ուսումնամեթոդական և հրատարակմանն առնչվող հարցերը քննարկող խորհրդակցական մարմին է, որը կոչված է նպաստելու Համալսարանում կատարվող ուսումնական և գիտական աշխատանքներին և դրանց արդյունավետության բարձրացմանը:
2.2. Համալսարանի մեթոդական խորհրդի կազմի մեջ մտնում են՝
ա) Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը,
բ) Համալսարանի ակադեմիական քաղաքականության վարչության պետը,
գ) Համալսարանի յուրաքանչյուր ֆակուլտետից՝ ֆակուլտետի խորհրդի կողմից առաջադրված երեքական անդամ:
2.3.Համալսարանի մեթոդական խորհրդի կազմը հրամանագրվում է Համալսարանի ռեկտորի կողմից և գործում է երեք տարի ժամկետով:
2.4. Մեթոդական խորհրդի նախագահն ի պաշտոնե Համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորն է:

3. Մեթոդական խորհրդի խնդիրները.

3.1. Համակարգում է ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքները:
3.2. Քննարկում և երաշխավորում է՝
ա) ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման հարցերը,
բ) իրականացվող և նոր բացվող մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը,
գ) դասավանդման նոր եղանակները,
դ) ուսումնական գործընթացում կրեդիտային համակարգի և ուսանողների գիտելիքների գնահատման ռեյտինգային համակարգի ներդրումը,
ե) արտահամալսարանական կազմակերպությունների հետ ուսումնամեթոդական և գիտամեթոդական համագործակցության հարցերը,
զ)ուսումնամեթոդական և գիտամեթոդական այլ հարցեր:

4. Մեթոդական խորհրդի աշխատակարգը.

4.1. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է ռեկտորի առաջարկով կամ Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:
4.2. Մեթոդական խորհուրդը հարցերը քննարկում է իր նիստերում, որոնք անցկացվում են աշխատանքային ծրագրին համապատասխան կամ ըստ անհրաժեշտության:
4.3. Մեթոդական խորհրդի նիստերն իրավազոր են խորհրդի անդամների կեսից ավելիի ներկայության դեպքում:
4.4. Մեթոդական խորհուրդը առաջարկություններ և եզրակացություններ է ներկայացնում Համալսարանի ռեկտորին կամ գիտական խորհրդին:
4.5. Մեթոդական խորհրդի նիստերն արձանագրվում են:
4.6. Մեթոդական խորհրդի նախագահը ղեկավարում է խորհրդի ընթացիկ աշխատանքը, ներկայացնում է այն Համալսարանի գիտական խորհրդում և այլ կառուցվածքային ստորաբաժանումներում, ստորագրում է մեթոդական խորհրդի ընդունած փաստաթղթերը:
4.7. Մեթոդական խորհրդի փաստաթղթերը և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է խորհրդի նախագահի ձայնը:
4.8. Մեթոդական խորհրդի անդամներն իրավունք ունեն խորհրդի արձանագրության մեջ ներառել հատուկ կարծիք:
4.9. Մեթոդական խորհուրդը կատարված աշխատանքների մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի ռեկտորին և գիտական խորհրդին: